

6'5 49



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«10» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 075 - 24

Նախաձեռնող՝

«ՍՈՒԱՐԼԵՆԴ» ՍՊԸ

ք. Երևան, Պոռչյան փողոց, 2/1/18

Գործունեությունը՝

**5 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային կայանի
կառուցում**

Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Դաշտաղեմ բնակավայր

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 075 - 24

«10» հունիսի 2024թ.

«ՍՈԼԱՐԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՍՈԼԱՐԼԵՆԴ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ բնակավայր

Ներածական մաս. «ՍՈԼԱՐԼԵՆԴ» ՍՊԸ-ն նախատեսում է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Դաշտադեմ-Դդմասար խճուղի 2 հասցեում կառուցել 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևակայան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 12-րդ հոդվածի, 4-րդ մասի, 1)-ին կետի, «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայով՝ Օրենքի Գ կատեգորիայի ընթացակարգով՝ պայմանավորված Օրենքի 12-րդ Գլխի 37-րդ հոդվածի (եզրափակիչ մաս և անցումային դրույթներ) պահանջներով: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 04032020-02-0061 /ծածկագիրը՝ 02-035-0125-0009/, Թալին համայնքի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը՝ N 01, տրված՝ 30.01.2023թ.:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Ընդհանուր մակերեսը կազմում է 8.5 հա:

Նկարագրական մաս. «ՍՈԼԱՐԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից արևային կայանի կառուցման նպատակը ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցումն է՝ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022թ. մայիսի 18-ի, N°206-Ա որոշման համաձայն՝ «ՍՈԼԱՐԼԵՆԴ» ՍՊԸ-ին տրամադրվել է ԼԷ N°0701 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2044թ. մայիսի 19-ը գործունեության ժամկետով: Արևակայանի առավելագույն հզորությունն, կազմում է 5 ՄՎտ:

Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրված է տեղական ինքնակառավարման մարմինների և հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ՝ հաշվի



առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները: Նախնական ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել: Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ կարստ, սողանք, քարաթափություն, փլուզում և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներատերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Կայանի գեներատորային մասը նախատեսված է կառուցել բազմաբյուրեղային ֆոտովոլտային մոդուլներով, որոնք 24 հատ 200 կՎտ ելքային հզորությամբ ինվերտորների փոփոխական լարման ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ գլխավոր ընդունիչ վահաններին: 6300 կՎԱ տրանսֆորմատորների միջոցով կայանը միանում է ցանցին 110 կՎ կողմից՝ 110 կՎ օդային գծի մոտակա խարիսխային հենարանին ճյուղավորումով, մոտ 100մ ներանցումով (ՏՊ-151-110/1288-Հ, 28.12.2020թ.): Ըստ «ՀԷՑ» ՓԲԸ տեխնիկական պայմանների նախատեսված է 110կՎ լարման կողմում տեղադրել երկկողմ հաշվարկի սարքեր, որը և համարվում է որպես հաշվառման կետ: Համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ից տեխնիկատնտեսական հիմնավորման համար ստացված № ՏՊ-151 110/0381 առ 24.03.2020թ. ԷԷՀ-ին միացման տեխնիկական պայմանների և № Տ-110/0015 առ 23.12.2020թ. տեղեկանքի՝ Արագածոտնի մարզ Թային համայնք Դաշտադեմ-Դմասար խճուղի 2 հասցեում կառուցվող «ՍՈԼԱՐԼԵՆԴ» 5.0 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանը ԷԷՀ-ին միանալու է հետևյալ սխեմայով - կայանի տարածքում կառուցելու է 6300 կՎԱ հզորությամբ և 35/0.8 կՎ լարումով ենթակայան, մինչև միացման կետը՝ մոտ 2000 մետր երկարությամբ 35 կՎ օդային գիծ, «Խնուս» 110 կՎ օդային գծի մոտակայքում՝ 6300 կՎԱ հզորությամբ և 110/35 կՎ լարումով ենթակայան և հաշվարկային սարք, որն էլ միացվելու է համակարգին: Կայանի գեներատորային մասը իրենից ներկայացնում է հեծանային տիպի հենարանների վրա ամրացված, հորիզոնի նկատմամբ 20° թեքվածությամբ, գետնից առնվազն 50 սմ բարձրության վրա (ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը ձմռան ընթացքում կազմում է 41սմ) 26 հաջորդաբար մոդուլներից՝ 17 և 18 զուգահեռ շղթաներից (String), հավաքված երկու ենթադաշտերից (Sub-array): Ֆոտովոլտային մոդուլների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը 24մ/վ) (շինարարական կլիմայաբանություն ՀՀ ՇՆ II-7.01-2011):

Արևակայանի տարածում կառուցվող ենթակայանը 35/0,8-0,8 կՎ լարման ենթակայանին միանում է 2,2 կմ երկարությամբ 35 կՎ լարման օդային գծով: Ենթակայանը տեղակայված է ծովի մակարդակից 1550մ բարձրության վրա: «ՍՈԼԱՐԼԵՆԴ» ենթակայանի 110 կՎ ԲԲՍ-ում նախատեսվում է տեղադրել 110/35/6 կՎ լարման եռաֆազ, TATH-6300 մակնիշի՝ 110/35/10 կՎ լարման, ուժային տրանսֆորմատոր: 110 կՎ ենթակայանի շանթապաշտպանությունը ապահովվում է պորտալների վրա տեղադրած շանթարգելներով: Ենթակայանի սարքավորումները արտաքին գերլարումներից պաշտպանելու համար տրանսֆորմատորի 110, 35, 6 կՎ ներանցիչների վրա տեղադրվում են գերլարման արգելափակիչներ:

Ենթակայանի սեփական կարիքների սնման համար տրանսֆորմատորի 6 կՎ լարման կողմում նախատեսված է տեղադրել 10/0.4 կՎ 25 կՎԱ հզորության տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորի սնումը իրականացվում է ուժային տրանսֆորմատորների 10 կՎ լարման ելքից: Սեփական կարիքների վահանից սնվում են ենթակայանի ղեկավարման, պաշտպանության և օպերատիվ շղթաները, համալիրի լուսավորությունը և ջեռուցման համակարգը: Ենթակայանի արտաքին լուսավորությունը



նախատեսված է լամպերով լուսարձակներով: Էլեկտրատեղակայի կոմերցիոն հաշվարկի համար 110 կՎ լարման կողմում առանձին արկղի մեջ նախատեսվում է տեղադրել երկկողմ հաշվարկ իրականացնող էներգիայի հաշվառքի էլեկտրոնային սարք:

Տարածքում նախատեսվում է կառուցել տեսահսկման հատված, սպասարկման արահետներ, ջրամատակարարման և էլեկտրամատակարարման համակարգեր: Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ: Ենթակայանի վրա նախատեսվում է տեղակայել մետեոկայան: Նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներն և նյութերը մատակարարվելու են Երևանից: Կայանի շահագործման ժամանակային երաշխիքը կազմում է 25 տարի, ենթակայանի համար՝ 30 տարի:

Հենասյուների հիմքերի ամրացման և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիայի հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյուների, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ, որոնք ներառում են արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, մալուխագծերի խրամուղիների փորում, հողատարածքի ցանկապատում, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրում և յուղընդունիչ հորի կառուցում: Հողային զանգվածն առաջանալու է վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերից՝ ընդհանուր 3500 մ³ ծավալով: Հանվող հողային զանգվածի մեծ մասը օգտագործվելու է որպես հետլիցք՝ 3260 մ³ ծավալով: 240 մ³ հողային զանգվածը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր:

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից:

Շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա շինարարական աղբ՝ 5.3 խմ ծավալով, կենցաղային աղբ՝ կառուցապատման փուլում՝ 875 կգ, և շահագործման փուլում՝ 2.160 կգ/տ: Շինարարական աղբը կտեղափոխվի Դաշտադեմի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շինարարության և շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ՝ շինարարական և կենցաղային աղբ, օգտագործվող նյութերի մնացորդներ, յուղոտված լաթեր, տրանսֆորմատորային յուղեր, յուղերով աղտոտված ավազ:

Արևակայանի շինարարության և շահագործման փուլում առաջացող վտանգավոր թափոնները կհանձնվեն լիցենզավորված «ԱՄ-ԷՍԿԱ» ՍՊԸ-ին՝ պայամնագրային հիմունքներով, որի հետ «ՍՈԼԱՐԼԵՆԴ» ՍՊԸ-ն ունի նախնական համաձայնեցում: Թափոնների ճիշտ կառավարման և վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է բոլոր փուլերում՝ շինանարություն, շահագործում և փակում, հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիթորինգի իրականացում՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:



Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

Պարճառարական մաս. «ՍՈԼԱՐԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցումը էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա: Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների հարթեցում:

Շինարարության կազմակերպման և աշխատանքների իրականացման ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ զինված խլացուցիչներով:

Եզրափակիչ մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ «ՍՈԼԱՐԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից նախատեսված արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվել են Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի ղեկավարի նստավայրում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Դաշտադեմ բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական



ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների, շահագործման և փակաման փուլերում հնարավար վտանգավոր թափոնների առաջացման հետ, որոնք կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:
2. Մալուխագծերի անցկացման տարածքները և հատակագծերը անհրաժեշտ է համաձայնեցնել Թալինի համայնքապետարան հետ՝ անվտանգության նկատառումներից ելնելով:
3. Արևակայանի կառուցման ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջները:
4. Խախտված հողային զանգվածը հնարավորինս արագ վերականգնել՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու համար, իրականացնել մալուխագծերի կառուցման ավարտից հետո՝ հողերի վերականգնում:
5. Հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացնել գործունեության տարածքից՝ համապատասխան լիցենզավորված ընկերության միջոցով և բացառել կայուն օրգանական աղտոտիչներով շրջակա միջավայրի աղտոտումը և տարածումը:
6. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Թալինի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
7. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՍՈԼԱՐԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Դաշտադեմ-Դոմասար խճուղի 2 հասցում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական




Եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ



Էդիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ



Սուսաննա Անտոնյան